ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԷՄԻԼ ԴԻԼԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ԽՍՀՄ վաստակավոր ինժեներ Էմիլ Դիլանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան փողոց հ. 3 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՄԻԼ ԴԻԼԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԽՍՀՄ վաստակավոր ինժեներ, դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Էմիլ Դիլանյանը ծնվել է 1917թ. Երևանում:

1939թ. Եյսկի ռազմածովային ավիացիոն ուսումնարանն ավարտելուց հետո աշխատել է նույն ուսումնարանում որպես օդաչու-հրահանգիչ: Հյուսիսային ճակատի ծովային ավիացիայի կազմում մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին՝ որպես կործանիչների օդակի հրամանատար:

1942թ. Էմիլ Դիլանյանը ծանր վիրավորվելուց հետո վերադարձել է Երևան և հաջորդ տարի ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը: Ուսման տարիներին աշխատել է որպես ինստիտուտի կուսկազմակերպության քարտուղար: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել է ՀԿԿ Երևանի Կիրովի շրջկոմում որպես բաժնի վարիչ:

1953թ. Մոսկվայի էներգետիկական ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց հետո պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա:

1954թ. աշխատաել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում:

1955թ. ընտրվել է էլեկտրաբանեցման ամբիոնի վարիչ և շուրջ 20 տարի ղեկավարել այդ ամբիոնի աշխատանքները: 1956-1961թթ. աշխատել է որպես ֆակուլտետի դեկան:

Էմիլ Դիլանյանը 1960թ. մինչև իր կյանքի վերջը ղեկավարել է ինստիտուտի գիտահետազոտական բաժնի էլեկտրաբանեցման լաբարատորիան: Նրա ղեկավարությամբ լաբարատորիայում կատարվել են բազմաթիվ գիտական հետազոտություններ: Նա հեղինակ է 100 գիտական աշխատանքների:

1947թ. նա ընտրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, բազմիցս ընտրվել է Երևանի քաղաքային և շրջանային կոմիտեների անդամ, Երևանի քաղաքային սովետի դեպուտատ:

Էմիլ Դիլանյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Մարտական կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով, մի շարք մեդալներով, հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով:

Էմիլ Դիլանյանը մահացել է 1986թ. ապրիլի 12-ին Երևանում:

ԽՍՀՄ վաստակավոր ինժեներ Էմիլ Դիլանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան փողոց հ.3 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտոր Ռ.Մարուխյանի և «ՀՀ վետերանների միավորում» հասարակական կազմակերպության նախագահ, գնդապետ Ս. Եսայանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷՄԻԼ ԴԻԼԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էմիլ Դիլանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷՄԻԼ ԴԻԼԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էմիլ Դիլանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ